ΕΦΗΜΕΡΙΣ ΗΕΝΩΣΙΣ

ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

Ապրի մը ապագայ կեանքի բարուքման առաջին պայմանն է Միութիւնը :

«ՄԻՈՒԹԻՒՆ» ը ամեն տեղ ձրի կը ղրկուի :

ՀԱՍՑԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբագրութեան կը պատկանի :

Ա · ՏԱՐԻ | ՕԳՈՍՏՈՍ 1896 ԱԹԷՆՔ | ԹԻՒ 2

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Միութեան խնդիրը, այսօր առաջին անգամը չէ որ վիճաբանութեան նիւթ ըլլալով ընդհ. Հայութիւնը կը զբաղեցնէ. և ոչ ալ միայն մենք ենք որ այդ հին և ծանրակշիռ խնդիրը կուզենք վերստին ի հրապարակ բերել. այլ ժամանակին և պարագաների անխուսափելի պահանջն է, որուն անհրաժեշտ պէտքը կը զգայ այսօր ընդհ. Հայ հասարակութիւնը:

Թէ՝ ինչպէս և ուրկէ՞ յառաջ եկաւ մեր մէջ սոյն խնդիրը :

Հայութիւնը՝ երբ բարբարոս Թուրքի միջնադարեան ամբարշտութեանց ու բաղմադիմի վայրենութեանց ծայրայեղ հալածանքներուն ենթարկուած կը տեսնէր թէ՝ իր նուիրական արբանեակները տեղական իշխանութեան աջակցութեամբ բացարձակապէս կը պղծուին. իր պատիւը կը բռնաբարուի և իր կեանքը, ինչքը ու իր սեպհականութիւնը վայրենի Թուրքերէ՝ քուրդերէ և չէրքէզներէ անխնայ կը յաբչտակուին աղատ համարձակ : Նա՝ կրկնակի դիմումներ ըրաւ ուր որ անկէր բողոքեց, բայց իր ձայնը անլսելի մնալով յուսահատուր յետ դարձաւ. ուրիշ ինչ՞ միջոց մնաց հային համար. այլևս ճարահատեալ դիմեց ինքնօգնութեան և հրացանը ու դաշոյնը իրեն պաշտպան ընտրելով իջաւ ասպարէզ ու սկսաւ ցոյց տալ վայրագ Թուրքին իր պարտաճանաչութիւնը ու քաջութիւնը :

Իրաց այդ վիճակն ալ ունեցաւ իր պահանջը, այն է յեղափոխութիւնը. որուն շուտով մօտեցան մի քանի ճարպիկ հայրենասէր անձնաւորութիւններ, որոնք իբրև ինքնակոչ դեսպաններ ազգային հրապարակը նետուելով ստանձնեցին յեղափոխութեան դեկը, անկախութիւն ձեռք բերելու խոստումով : դրեթէ չաս ժամանակ չանցած երկրորդ կուսակցութիւն մ,ալ տեսնուեցաւ այդ հրապարակին վրայ տարբեր անունով միեւնոյն խոստումով :

Այս երկու կուսակցութիւնները ժողովրդի մէջ մտնելով Հայութիւնը երկու մասերի բաժնեցին և անոնց մէջ տարօրինակ ցրտութիւն մը ձգելով իրենք ալ սկսան մէկզմէկ նախատել արհամարհել և հարուածել թէ՝» մենք ենք անկեղծ յեղափոխականներ. դուք գոյութիւն չունիք : իսկ միւսները կսեն թէ դուք ո՞վ էք այն ինչ գործը մենք արինք. դուք ինչ՞ արիք: Այս օրինակ կարգ մը տղայական նախանձոտ կռիւներով իրաց այս տխուր վիճակին մէջ իսկ կը յամառին տակաւին շարունակել իրենց այդ ազգակործան ընթացքն ի վնաս հայութեան :

Ահա այս կուսակցական բաժանումներուն օրերէն ի վեր մեր մէջ մուտ գտաւ Միութեան հարցը, որ մինչև այսօր կը զբաղեցնէ հայերս և դեռ ո՞չափ պիտի զբաղեցնէ : Առ այս շատեր կեդրոններուն դիմումներ ըրին, նամակներ գրեցին, խորհուրդ տուին, պատգամաւորութիւն ղրկեցին, բողոքեցին և ամէն ջանք ի գործ դրին, որպէս զի երկու կուսակցութիւնները միացնեն և վարչական դրութեամբ մէկ կեդրոն հաստատեն ու համերաշխաբար գործեն. բայց դժբաղդաբար այդ ամէն ջանքերն ու աշխատութիւններն ապարդիւն ելան և անկարելի դարձաւ այդ, քանի որ միամիտ ժողովրդի սանձն իրենց ձեռքն անցուցած որ կողմ ուզեն կարող են քաշել : Թէ և պարզ ժողովուրդը յեղափոխական առաջին քայլափոխին մէջ իսկ անհամաձայնութիւն տեսնելով իր անփորձ հեռատեսութեամբ սկսաւ մտմտալով դանգատիլ կուսակցական այդ բաժանումներուն դէմ, նախատեսելով ապագային իրեն սպառնացող վտանգը, որուն ինչպէս այսօր ենթարկուած է :

Մենք իբրև ռամիկ դասակարգի պատկանող աննշան անձնաւորութիւններ, որ Հաշտութեան մեծամասնութիւնը կը կազմենք, մեր ամենատկար դատողութիւններով համոզուած և ընդունած ենք թէ՝ մեր թշնամին տապալելու և մեր Ազգը անոր ճիրաններէն փրկելու միակ միջոցն է ՄԻՈՒԹԻՒՆԸ : Ուր որ Միութիւն կայ, հոն բացառիկ ոյժ մը և զօրութիւն մը կը տեսնուի : Ուրեմն ինչի՞ համար մեր գործիչները չեն ուզեր հասկանալ Միութեան այդ օգտակարութիւնը և ինչի՞ համար ժողովրդի արդար պահանջների համապատասխանելով չեն ուզեր գոհացում տալ անոր բաղձանքներուն. չէ՞ որ նա իր կամքով և իր զոհաբեր տրիւնով գոյութիւն տուեալ է այդ կուսակցութիւնների: ինչ՞պէս ուրեմն անոր ձայնը այսօր անլսելի կը մնայ:

Անշուշտ այս իրողութիւնները անաչառութեամբ խոստովանելով չատերը պիտի զայրացնենք մեզի դէմ որովհետև պահպանողական դրու-

թեան հակառակ կը խօսինք. ըստ Թրքական այն առածին թէ (տօղրու սէօյլէյէնի եէտի քէօյտէն գուարլար) Սակայն ինչ որ ըլլայ մենք մեր պարտականութիւնը պիտի կատարենք:

Մենք խնդրին աւելի խորերը թափանցելով չենք ուզեր հասարակաց միտքը զայթակղեցնել և ոչ ալ կարծուած հակառակորդների արժանապատուութեան դպչիլ, այլ կը բաւականանանք դարձեալ յիշեցնել թէ ինչ՞ օգուտ պիտի կրնանք սպասել, եթէ, կուսակցութիւնները միութամբ գործեն և ինչ՞ վնասներ պիտի ունենանք տակաւին. եթէ առանձին առանձին գործեն: Այս մասերը որ մեծ և կարևոր խնդիրներ են կը թողունք «ՄԻՈՒԹԻՒՆ» ի յետագայ թիւերի մէջ բացատրել:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաղուէն Հայ վաճառական մը Զմիւռնիա իր քրոջը ղրկած նամակ մը ձեռքերնիս անցած է, յորմէ հետևեալ հատուածները քաղելով իր ճշգութեամբը կը հրատարակենք:

Բաղու 18 Յունիս 96

Քոյր իմ գրած ես թէ ողջ՞ ենք թէ մեռանք և մեր խաւում ազգականներուն որը մեռած որը մնացած է: Ախ՛ սիրտս չի բաներ որ ամէն եղածը գրեմ — հօս նամակագիրը շատ մը սպանուողների անունները տալով կսէ — դուք ողջ կեցէք:

Կոտորածը եղաւ Հոկտեմբեր 25 ին Երկուշաբթի առտըվանց կանուխ երբ լոյսը ծագեց, չորս կողմէն պաշարեցին քիւրտերը և 30,000 մարդ լեցան քաղաքը. բոլոր մարդիք թողլին իրենց տուն և ստացուածք փախան. մենք ալ փախանք մինչև Աստուածածին այնտեղ զարկին ընծի 3 գնդակ չօլախ կողմս. մէկը պաղօրըս, մէկը արմնկս և միւսը ծըծիս տակ: Աջ կողմս ալ մէկ խանջար անկաջս, մէկ խանջար քիւրէկիս գլուխը կացին մոլգլխուս զարկին:

Երբ կոտորածը դադրեցաւ, իմ վրայ խելք չկայ մեզ կը տանին չօլէեան (տեղի անուն ըլլալու է) կը պառկեցնեն տաճկի տուն. ութ օր հոն մնալէն յետքը եկանք վարի տունը հեչ բան չգտանք. միայն խմորի լաթը գտանք մինչև հիմայ ատորմով կը պառկինք. ես ալ լման ամիսմը պառկեցայ ...... ին տունը:

Դրեթէ նոր եմ ելեր ոտքի վրայ, բայց շատ թշուառ կապրինք:

Արդէն տուները աւերակ են. զարնուած մարդոց թիւը որ կուզէք հանել, գեղ քաղաք 1800 մարդ ջարդուեցաւ. բայց վերի գեղերէն: տուն կայ որ բոլորովին անցուցին:

Քոյրըս. կըսես թէ՝ գիր չես գրեր. ին՛չ գրեմ մինչև հիմա աչքերնուս արցունքը չի կտրիր: Բոլոր երթացած մալըս հաշիւ կնեմ այնչափ հազար զուռուշ թալափած եղաւ մ.... ին ոսկետաննալ թոյնին (թունիր) ծործին մէջ թաղեր էի, անալ Տէր ..... ին տղան հաներ տարեր է:

Քոյրս եթէ գիս խեղճըս կը սիրես, հիմա իմ աչքս ձեր ձեռքն է ձեր օգնութեան կը կարօտինք որովհետև անօթի ենք:

Ղրկած սանդրդ ալ տարին թուրքերը, սանտր մը ղրկէ որ գլուխնիս սանտրենք:

Զգիտնաս թէ՝ բոլոր բաները գրեցի. դեռ շատը տեղնէ որ մէկը գրեմ. Եկեղեցի և Ժողովարան չկայ. բոլորը աւերակ և պղծուած են, մենքալ երկիւղ ունինք որ կորսուինք:

* * *

Կ. Պոլիս 12 Յուլիս 1896

Խորին բերկրանօք կարդացինք ի վաղուց անտի ցանկացեալ «ՄԻՈՒԹԵԱՆ» Ա. թիւը, կը փութամք շնորհաւորել և յարատևութիւն մաղթել:

Տա՛յր Երկինք որ Թուրքիա կոչուած եղեռնավայրում բնակող եղբարք լսէին ձեր յորդորներ ու Միութեան սուրբ շաւղին մէջ ընթանային: Լսէին նաև Եւրոպաբնակ մեր հարազատները ու փարէին Ս. Միութեան, և այդպէսով դուցէ մեր օրհասականին ձեռք կարկառէին:

ՄԻՈՒԹԻ՛ՒՆ, ՄԻՈՒԹԻ՛ՒՆ: այն է որ՝ մեզ դահճին ձեռքէն - պատիւը անօրէնին մաքիլներէն պիտի ազատէ:

Փառասէր ամայացան, Պօլսոյ հայերու վիճակը անտանելի դարձաւ օրական հարիւրաւորներ կը ձերբակալուին, հարիւրաւորներ կաքսորուին. տասը հայու կեանք մէկ հաւու կեանք ալ չարժեր. երկու հայ անկարելի է իրարու քով նստիլ: Բանտերը լեցուեցան, ամենէն տսար ոստիկանն անգամ Սուլթան Համիտ դարցած է:

Վա՜յ թշուառ հայուն գլխուն. դուրսէն վատեր ներսէն վատեր ամէն կողմէն մարդախողող ձեռքեր թշուառ հայուն կենաց թելը խզել կը տքնին:

Կախաղանի դրութիւնը թէև երկու շաբաթէ ի վեր դադրեցաւ, սակայն բանտարկութիւն և աքսոր նոյնն են: Տակաւին հինգ օր առաջ Շապին—Գարահիսարէն Տուքիկեան Աւագ էֆ. իւր եօթն ընկերներով ասկէ անցնելով գնացին իրենց աքսորավայրը Ափրիկեան Թրիպոլիս:

ԱԼԻՍԻ ՈՐԴԵԳԻՐԸ

Կ. ՊՈԼԻՍ 8 Յուլիս 1896

Եթէ հայոց մեծամասնութեան սրտերը բանանք — անոնց հետ խմսալ — պիտի տեսնենք որ բոլորիս փափաքն ու բաղձանքն է ՄԻՈՒԹԻՒՆ, որը դուք ձեզի նշանաբան ընտրելով յօդուած պզտիկ սկսած էք գրել. բան մը որ մենք լոկ երևակայած ու երազած էինք, իսկ դուք ի լոյս կը հանէք:

Իմ պարտականութիւնս պիտի ըլլայ միշտ գրել ու քաջալերել ձեզ, որպէսզի պազարին անգղիացու պէս բոլոր ձեր առջև ելած խոչնդոտներու յաղթելով միշտ գրէք մինչև որ տեսնէք թէ՝ ձեր ջանքերը պսակուած են:

Թող նկատի առնեն մեր յեղափոխական կուսակցութիւնները և լաւ խորհին թէ մենք որ մեր մէջ չենք միաբանիր մեր ազատութեան համար, ինչ՞ու կը քննադատենք Եւրոպացիները որոնք չեն միաբանիր մեր գործին մէջ. Քրիստոսի ըսածին պէս թկ՝ առաջ մեր աչքին շիւղը հանենք:

ՆԱՄԱՆ

ԳԱՐԻՐԷ-Պ. ... Ձեր ղրկած յօդուածը երկար ըլլալուն համար չկրցինք հրատարակել, ներողութիւն:

ԹՈՒՐՔԻԱԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Թուրքիոյ վիճակը խիստ յուսահատական և անտանելի դարձած է։ Օսմ. Պետութեան ամէն կողմերը ամէն անկիւնները կրակի մէջ կը վառուին։ Անիշխանականութիւնը ամէն տեղ ընդհանրացած կը սպառնայ մինչև իսկ խալիֆին Գահը տապալել։

Յիմար Թուրքը 11 ամիսներ առաջ Հայաստանի մէջ հրդեհ մը ձգեց և այդ երկիրը մոխիր դարձուց, որպէսզի տէօվլէթին տիւշման կեավուր հայերը միայն ջնջէ, բայց այդ հրդեհը կայծակի արագութեամբ տարածուելով երկրին ամբողջ մասերը վառեց, և այժմ հասաւ մինչև Եըլտըզի կայսերական պալատի դուռը։

Դրամական տագնապը սաստիկ կը նեղէ Բ. Դուռը։ Զօրքերը բռնկած են ապստամբիլ և մերժել իրենց զրկուած տեղերը երթալ. որովհետև ամսական չեն ստանար և գնացողներն ալ չէհիտ ըլլալով յետ չեն դառնար։ Երկաթուղիների ընկերութիւնները րէտիֆների փոխադրութեան ծախքերը կանխիկ կը պահանջեն (պաթտըքճիէ մալ գարտըրմըշ կիսի) Օսմ. գրահանները առանց հանքածուխի մնալով ուզած տեղերնին չեն կարող երթալ. դրամ չըկայ փոխատուութիւն ընող չկայ։

Միւս կողմէ ազատական ըսուած Թուրքերը՝ որոնց խելքը այսչափ տարիներէ հետէ հազիւ գլուխնին եկած, երկրին կառավարական դրութիւնը բարեփոխել և սահմանադրութեամբ կառավարուիլ կը ջանան։ Ասոնց մէջ գաղտնի զօրաւոր կազմակերպութիւն մը կայ որ մինչև Եըլտըզի պալատին մէջ հաղորդակցութիւն ունի. ի հարկէ քիչ ժամանակէն ասոնք ալ իրենց հրաշքը ցոյց պիտի տան։

Միւս կողմէ, Պուլկարները աղմկալից սպառնալիքներ կնեն Դրան, նոր ապստամբային խումբեր մտցունելով ի Մակեդոնիա, ուր կը պատահին յաճախակի ընդհարումներ ի շնորհս Սօֆիայի Մակեդոնական Գոմիթէի լուրջ աշխատութեանց։

Սերպերն ալ իրենց տետրակները բանալով հին հաշիւներ կը պահանջեն Դրնէն Մակեդոնիայի մէջ իրենց ունեցած իրաւունքների գոյութիւնը ապահովելու համար։

Յունաստանի ժողովուրդը կրետական և Մակեդոնական խնդիրներէն սաստիկ յուզուած, հակառակ կառավարութեան պահպանողական դրութեան, 180 զինեալ յեղափոխականներ Մակեդոնիա մտնելով առաջին կռուին մէջ 82 Թուրքեր սպաննեցին և շատեր ալ վիրաւորեցին։ Մակեդոնիայի խռովութիւնը երթալով կը սաստկանայ և Բ. Դրան անհանդարտութիւն կը պատճառէ։

Իրիրօ—Ալպանիայի Քրիստոնեայ ժողովուրդը իր կրած բազմադիմի հարստահարութեանց դէմ բողոքելով ապստամբութեան նշաններ ցոյց կուտայ։ Արդէն գործի սկսած և իր գոմիթէն ալ հաստատուած է Իտալիա։

Ասիայի կողմը Տրուզները՝ որ Բ. Դրան բաւական վնասներ հասցնելով վերջերս նոր զրկուած 6000 Թուրք զօրքերէ պարտուած և իրենց զէնքերը յանձնած էին, այժմ նոր հրացաններով և ռազմամթերքով զինուած կը հալածեն Թուրքերը։

Աֆրիկէի մէջ ալ Արաբները կը պատերազմին Թուրքերի դէմ Սուլթան համիտը խալիֆութենէ զրկելու դիտումով։

Իսկ կրետացիները կը շարունակեն քաջութեամբ պատերազմիլ. միայն երկու շաբաթ զինադադար ըրին, որովհետև Սուլթանը հրամայած էր որ երկրային խառն ժողովը գումարել և քրիստոնէից պահանջները Բ. Դրան ներկայացնել. այդ կատարուեցաւ բայց Դուռը՝ մերժեց անոնց առաջարկած պայմանները։ կրետացիները վերսկսան իրենց գործը և կղզիին մէկ ծայրէն մինչև միւս ծայրը կրակ կը տեղացնեն։

Հիւանդ Թուրքը՝ այս յուսահատ վիճակին մէջ իսկ մինչև 35 տարեկան րէտիֆները ի զէն կը կոչէ. հազարաւոր մերկ ու անօթի զօրքեր կը համախմբէ. Հելլենական և Սերպօ—Պուլկարական սահմանագլուխները կամրացնէ։ Իր սարսափահար աչքերը դարձուցած աջ ու ձախ կը դիտէ և իր հակառակորդների դէմ կատաղի յարձակումների փորձեր կընէ, որպէսզի իր Նախահայրերի ժառանգ թողած հաստատութիւնները անխախտ պահէ. իսկ միւս կողմէ իր յուսահատութիւնը աւելի կը սաստկանայ, երբ կը տեսնէ թէ՝ Եւրոպայի պատմական խաղաղասէր այն քաղաքականութիւնը՝ որ մինչև ցարդ կը պաշտպանէր զինքը, այժմ նա ալ սկսել է այլևս զզուանք յայտնել իր փտած դիակի գարշահոտէն ու ըստիպուել է զրկել զինքը իր մարգարէի սուրբ քաղաքը Մէքկէի—Մէտինէ, ուր միայն կը վայելէ։

Ռուսիա և Անգլիա համամիտ են բանակցելով Հայկական և կրետական խնդիրների գոհացուցիչ վերջ մը տալ։

ԹՈՒՐՔԻԱԻ ԱՊԱԳԱՆ

Նէւ—Եօրքի Հէրալ լրագիրը բարձրաստիճան դիւանագէտի մը հետևեալ կարծիքը հրատարակած է։

Թուրքիան (կսէ դիւանագէտը) այս վտանգների մէջ տակաւին պիտի ապրի և չպիտի փճանայ դիւրին։ Եթէ կրէտէն և Մակեդոնիան ալ կորսնցնէ—ինչպէս պիտի պատահի այդ ուշ կամ կանուխ — դարձեալ պիտի մնայ իբրև մի հզօր տէրութիւն, ի շնորհս ասիական հաստատութիւնների. աւելի լաւ է ըսել թէ՝ Թուրքիա Ասիական ոյժ մ՚ է։

Թուրքը հեռի է Եւրոպական քաղաքակրթութենէ և իր կառավարական յոռետես դրութիւնը կը հարկադրէ Եւրոպան արտաքսել զինքը այդ տեղէն։

Օսմ. կայսրութիւնը պա երազմող վայրենի խուժանների ոյժ մ՚ էր և մինչև այսօր կը մնայ անփոփոխ։

կը հաւատացուի թէ՝ Ռուսիա կը բաղձայ Կ. Պօլիսը գրաւել, ինչարկին բռնութիւն ի գործ դնելով. բայց որովհետև այժմ թագաւորող Զարը խաղաղասէր է. Թուրքիոյ այդ լուծումը յառաջ պիտի գայ համաձայնութեամբ, և Կ. Պօլիսը պիտի դառնայ ազատ քաղաք ինչպէս Համպուրկը։

Խալիֆների ժառանգորդ երկու ազգեր կը նկատուին. Ռուսիա և Աւստրիա. Այս վերջինը ունի ներքին տագնապներ. իսկ Ռուսիա կարող է վայելել այդ ժառանգը։

Թէ՝ երբ պէտք է լինի այդ, ժամանակը կը մնայ անորոշ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

—Խորամանկ Թուրքը իր մեքենագործութիւններին օժանդակող մի քանի ազգուրաց հայերի հետ, յետ երկար ջանքերի վերջապէս յաջողեցաւ հրաժարեցնել Ս. Պատրիարք Հայրը:

Կ. Պոլսէն տեղւոյս «Աքրոպոլիս« թերթին կը գրեն թէ՝ Ամենապատիւ Տ. Մատթէոս Իզմիրլեան հրաժարական մատոյց և անմիջապէս դունէն ընդունեցաւ: Նորին Սրբազնութեան հրաժարման բուն շարժառիթը խիստ բանաւորէ: Բ. Դուռը կը պահանջէ թէ՝ եթէ երբէք հայկական նոր շարժում մը պատահի, պատասխանատու պիտի ճանչնայ Ս. Պատրիարքը և ազգային կրօնական ու քաղաքական ժողովի անդամները: Նկ ելութիւնը նշանակութեան արժանի մեծ խնդիր մ՚ է թէ՝ ո՞վ պիտի յաջորդէ Նորին Սրբազնութեան. եթէ տնոր հայրենասիրական բազմաթիւ յատկութիւններին կարգապահ մէկը ըլլայ, անտարակոյս Թուրք կառավարութիւնը չպիտի վաւերացնէ անոր ընտրութիւնը իսկ ընդհակառակը եթէ Բ.Դրան սրբանեակներին հաճելի և համախոհ մէկը ըլլայ, անոր ալ կեանքը շուտով պիտի բառնան Հայ յեղափոխականները հետևապէս Մայրաքաղաքին մէջ ընդհ. սարսափ կը տիրէ թէ՝ մի գուցէ նոր խռովութիւն մը յարուցանեն հայերը:

Զմիւռնիայէն մասնաւորապէս կը գրեն թէ՝ Արևելեան երկաթուղիի Ալաշէհիրի կայարանը, ուր կաշխատին բազմաթիւ հայեր, իտալացիներ և թուրքեր. Յուլիս 7 շաբաթօր գործաւորների վճարման պահուն ընկ. գրագիրը հայերի օրինական իրաւունքը չվճարելով հանդերձ, կարգ մը անտեղի հայհոյանքներ կուղղէ անոնց ազգութեան դէմ. իսկ հայերը բնականաբար զայրանալով Սասունցի պղօն և իր ընկերը դանակի երկու հարուածներով կը սպաննեն զայն: իսկ իտալացիները և մանաւանդ թուրքերը բահ ու բրիչ ի ձեռին հայերի վրայ յարձակելու փորձ կընեն, այդ երկու Սասունցիները երկու թուրք ալ կըսպաննեն և մի քանիներն ալ վիրաւորելով խոյս կուտան: Տեղական իշխանութիւնը կը փնտռէ զանոնք, բայց մինչև այսօր ձեռք անցած չեն:

——Ազատական թուրքերը Ահմէտ Րիզա հրապարակագրի նոր հրատարակութիւնով մը կոչում կընեն մեծ Տէրութիւններին, որպէսզի միջամտելով Օսմ. կայսրութեան երկրին քայքայուած անորոշ վիճակը վերանորոգեն:

—Օտար թերթերի մէջ կը տեսնենք թէ ամիս մը առաջ Ըկն (Էկին) քաղաքին մէջ նոր կոտորած մը ըլլալով 400 հայեր սպաննուած են:

—Բաղէշի սահմանին մէջ ՄՕթկայի և Ախլատի լեռնաբնակ քիւրտերը շրջակայ հայ գիւղերի վրայ յարձակելով նոր յափշտակութիւններ և ըսպաննութիւններ ի գործ դրած են:

—Յունիս ամսի վերջերը Կ. Պոլսի մէջ 300 հայեր իբր անգործ և կասկածելի անձինք ձերբակալուած և Փոքր Ասիոյ զանազան քաղաքները աքսորուած են: Ուրիշ 30 հայեր ալ իբր յեղափոխական շարժումների կազմակերպիչներ Ֆէզան աքսորուած են:

—Տիգրանակերտ նոր զրկուած զօրքերը մերկ, քաղցած և արտաքին կարգի թշուառութեան մատնուած, կառավարութեան դէմ զայրանալով՝ որովհետև չեն ստանար ամսաթոշակ, կը յարձակին հայ գիւղացիներին վրայ և ինչ որ գտնեն կը իւրացնեն բռնի:

—Հալէպի զօրանոցներին ամբողջ զօրքերը կառավարութեան դէմ ապստամբած և յայտնապէս մերժած են երթալ իրենց ղրկուած տեղերը:

—Կ. Պոլսի մէջ զարգացած դասակարգին պատկանող Թուրքերը նոր կազմակերպութիւն մը ըրած և մօտերս յայտնի գործեր ցոյց տալ կը խոստանան. այս մարմինը հաղորդակցութիւն ունի մինչև Եըլտզի պալատին մէջ: Ասոնց ստորագասեալ անդամներէն շատերը վերջերս մատնուելով ձերբակալուած և Աֆրիկէի զանազան տեղերը աքսոր ղրկուած են:

—Բ. Դուռը Պրուսայի առաջն. Բարթողիմէոսը Պատրիարք ընտրածէ, բայց նա՝ թրքամոլ նկատուելով Ս. Պատարագի պահուն անունը չէ յիշուած և Մայր Եկեղեցիի դուռը ցոյց մը ընելով շատ հայեր ձերբակալուած են:

— Աղեքսանդրիա — Պ. Բ. Մ. Ձեր նամակը ստացանք, յաջորդ թուով պիտի հրատարակենք:

—Սեբաստիայէն Պոլիս հասնող ճամբորդ մը կը գրէ մեզ թէ՝ տեղւոյն հայերի վիճակը անտանելի դարձածէ: Մոլեռանդ թուրքերը շուկաների մէջ ազատ համարձակ սպառնալիքներ կնեն—կ ե ա վ ո ւ ռ լ ա ր ա ր թ ք մ ի ւ ս տ է թ ի ն ի զ պ ի թ մ ի շ տ ի ր. ի ք ի ա յ տ ա ն թ է ք մ ի լ է ն ք է ս է ճ է յ ի զ ս ի զ ի:— Խեղճ արհեստաւորները վախնալով հազիւ շաբաթն անգամ մը խանութ կը բանան. Թշուառութիւնը աննկարագրելի է: Գիւղերէն քաղաք երթևեկութիւնը դժուարացածէ. որովհետև ինչ որ ծախու տանեն, ճամբին վրայ կը յափշտակուին: Ս. Առաջնորդը առ այս քանիցս դիմում ըրած և անլսելի մնացած է կուսակալէն:

—Պօսէն կը գրեն թէ՝ Վանի հարաւային կողմը գրեթէ ամբողջ Հայկական գիւղերը այրուած և երկիրը դարձած է ամայի դաշտ: Բնակիչներին շատերը սպաննուած, մէկ մասն ալ լեռները խոյս տուած և ապա Պարսկաստան մտած են:

— «Հայք» ի Յուլիս ամսի թուին մէջ կը կարդանք թէ՝ Հնչակեան կուսակցութիւնը կը կորսնցնէ իր ժողովրդականութիւնը, և իր անդամակիցներէն շատերը գաղափարափոխ ըլլալով Դաշնակցականութիւնը կնդունին:"

—Տրապիզոնի թուրք խուժանը վրեստին կատղելով երկու յոյն Քահանայ և ուրիշ 20 յոյներ սպաննածեն:

—Կրետէի Անօ-Բօլիս ըսուած տեղը թուրքերը քահանայի մը նախ քիթը ականջները ու բազուկները կտրած և ապա կենդանւոյն այրածեն զայն:

—Հետևեալ լուրը տեղւոյս «Էսթիա» թերթին մէջ տեսնելով վերապահութեամբ կը հրատարակենք.

Բ. Դուռը ամիսներէ ի վեր հետամուտ էր հրաժարեցնել Հայոց Պատրիարքը. որովհետև չէր յաջողած, այս անգամ տարօրինակ մեքենագործութեամբ Հայերէն խմբագրուած Նորին Սրբազնութեան դէմ գանգատող յայտարարութիւն մը հազարաւոր օրինակ տպագրելով Յուլիս 14 կիւրակէ օր Հայ Եկեղեցիների մէջ ցրուած է:

Ս.Պատրիարք Հայրը կարծելով թէ Հայեր խմբագրած են զայդ, սաստիկ զայրացաւ և միևնոյն ժամանակ Ռուս. Դեսպանատան Ա. Թարգման Պ. Մաքսիմօֆ իր մէկ այցելութեամբ յաջողել է համոզել և հրաժարեցնել Նորին Սրբազնութիւնը:

Բ. Դուռը այս ալ բաւական չհամարելով խառն ժողովի անդամները կը հրաժարեցնէ, և անոնց տեղ կառավարական հաւատարիմ պաշտօնեաներ կնտրէ: Տեսէք Թուրքիայի օրէնքը և իրաւունքը:

Տառերի նուազութենէն շատ տեղեր պակասութիւններ կան, ներողութիւն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՈՒԹԻՒՆԻ

Արտօնատէր Ա. ԳՕՔՔԻՆՈՍ